ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/9

ք. _____ «02» Հոկտեմբեր 2018 թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Նելսոն Զուլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Փառանձեմ Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 090 000 (մեկ միլիոն ինսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
Հեռ.՝ 060-80-80-03
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝
Էդգարս Շուրոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության փ. 22
Հեռ.՝ 010-54-43-01
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
1930014089990200
ՀՎՀՀ 02586575

Տնօրեն՝ Փառանձեմ Գևորգյան

(ստորագրություն)

«02» 05 20 թ. կնքված ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	79211150	**Հիմնական ստացող՝** Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն **Աուդիտի ենթակա ժամանակահատված՝** 01.09.2017-31.12.2017 **Աուդիտի կառուցվածք և կազմակերպությունների նկարագիր** Էլեկտրոնային առողջապահությունը 21-րդ դարում առողջապահական ոլորտի արդյունավետության և բարելավման կարևորագույն պայման է: Այն նպատակաուղղված է զարգացնելու առողջապահական համակարգը՝ բարելավելով դրա որակը, հասանելիությունը և արդյունավետությունը տեղեկատվական համակարգերի միջոցով: Միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը ենթադրում է առողջապահության համակարգի համապարփակ բարեփոխում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման միջոցով, ինչը հնարավորություն կտա հասարակությանը մատուցել բարձրորակ, անվտանգ, հասանելի և մատչելի բժշկական ծառայություններ: Առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական համակարգը տվյալների փոխանցման համապարփակ և համաժամանակյա հարթակ է երեք տեսակի տվյալների համար. կլինիկական, ադմինիստրատիվ և ֆինանսական: Համակարգը ինտերֆեյսներ է տրամադրում պացիենտներին, առողջապահական ծառայությունների մատակարարներին, առողջապահության նախարարությանը և ապահովագրական կազմակերպություններին: Կազմակերպությունը գործում է «Էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական միասնական համակարգի օպերատոր հիմնադրելու եղանակով որոշակի ծրագրային փաթեթ, շարժական գույք և այդ տեղեկատվական համակարգի սպասարկման իրավունքներ փոխանցելու» կոնցեսիայի	դրամ	1 090 000	1		

պայմանագրի շրջանակներում:

2017թ-ին կազմակերպության համախառն հասույթը կազմել է 209,177,631դրամ: Ծառայությունները մատուցվել են բժշկական հաստատություններին, ՀՀ առողջապահության նախարարության առանձնացված ստորաբաժանումներին, ապահովագրական կազմակերպություններին և այլն:

Բժշկական հաստատություններին մատուցված ծառայությունների գումարները 2017թ-ին սուբսիդավորվել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից:

Կազմակերպության աշխատակիցների քանակը 2017թ-ին կազմել է 30 հոգի:

Այս տեխնիկական բնութագիրը նախատեսված է 2017թ (01.09.2017-31.12.2017) ֆիսկալ տարվա հաշվեքննության համար:

1. Պահանջվող փաստաթղթեր

Աուդիտի իրականացման ժամանակահատվածի ընթացքում կազմակերպությունը պետք է աուդիտորին տրամադրի վերջինիս կողմից պահանջվող բոլոր գրանցամատյանները և փաստաթղթերը նշելով նրանց գտնվելու վայրը: Աուդիտորի կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է.

- ֆինանսական քաղվածքները,
- համաձայնագրերը,
- Եկամուտների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական միջոցների հետ կապված հիմնական ֆինանսական փաստաթղթերը,
- գործունեության հետ կապված ամսական կամ եռամսյակային հաշվետվությունները (ծրագրային և ֆինանսական),
- Շրջանառու մնացորդային հաշվեկշիռը, դրամարկղային գիրքը, այլ կարևոր մատյաններ և փաստաթղթեր,
- Բոլոր ծախսերի հետ կապված փաստաթղթերի բնօրինակները (հաշիվ-ապրանքագրերը, բժշկական ապրանքների ձեռքբերում կամ մրցույթների անցկացում պահանջող այլ գնումների հիմքերը, աշխատավարձերը, վաուչերները և այլն),
- Բանկային քաղվածքները,
- տարբեր հարցերի վերաբերյալ կարևոր նամակագրությունը,
- ծրագրի իրականացման գործառնական ձեռնարկը,
- Ներքին աուդիտի և ցանկացած այլ հաշվետվություններ, որոնք արտացոլում են դրամաշնորհային

		ծրագրի ծախսերը, դրամաշնորհների հետ կապված կառավարչական և այլ հարցեր: • Աուդիտորական եզրակացություն հայտնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր: **2. Աուդիտի նպատակներ** 2.1 Աուդիտի նպատակն է ստանալ աուդիտորի մասնագիտական եզրակացությունը կազմակերպության ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ստացված միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ՝ ինչպես ներկայացված է կազմակերպության կողմից, և մասնավորապես հաստատել, որ ներկայացված ծախսերն ամբողջովին համապատասխանում են կնքված պայմանագրերի և համաձայնագրերի դրույթներին և հավելվածներին՝ պատշաճ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և օգտագործման արդյունավետությանը: 2.2Հաստատել ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ծրագրային հաշիվներին (հաշվապահական գրքեր), որոնք հիմք են հանդիսանում ֆինանսական փաստաթղթեր մշակելու համար և նպատակ են հետապնդում ներկայացնել ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից ծարգրի շրջանակներում կատարված ֆինանսական գործարքները: 2.3Հաստատել, որֆինանսականփաստաթղթերըհամապատասխանումկամհամաձայնեցվածեններկայացված տեղեկատվության (ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ) հետ: **3. Ֆինանսական հաշվետվությունների մշակման պատասխանատվությունը** 3.1 Աուդիտորիմիասնական ֆինանսական հաշվետվության մեջ ներառվող առանձին հաստատությունների մշակման պատասխանատվությունն ընկած է կազմակերպությանվրա: 3.2 ԿազմակերպությունըկազմումէՖՀ-ները IFRS-ների պահանջներին համաձայն: **4.Ֆինանսական փաստաթղթեր (հաշվետվություններ)** ա. Ծրագիրն իրականացնող կազմակերպության Ֆինանսական միջոցների աղբյուրների և օգտագործման կամ				

		եկամուտների ու ծախսերի հաշվետվություններ, որտեղ ներկայացված են ստացված գումարները և բոլոր այլ եկամուտները, ինչպես նաև բոլոր դրամաշնորհային ծախսերը՝ ծախսային կատեգորիաներով: բ. Կազմակերպության հաշվեկշիռը կամ ֆինանսական միջոցների հաշվետվությունը, որտեղ հստակ երևում են ակտիվները և պարտավորությունները: գ. Կազմակերպության ֆինանսական միջոցների հոսքի վերաբերյալ հաշվետվություն: դ. Կազմակերպության բյուջեի և փաստացի ծախսերի ներկայացում ե.Ֆինանսական փաստաթղթերին վերաբերող նշումներ, որոնցում բացատրվում են կիրառված հաշվապահական սկզբունքները և իրականացվում է հիմնական թվերի մանրամասն վերլուծությունը: զ. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ցույց է տալիս կանխավճարները: է. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ներկայացնում է գնված բոլոր հիմնական միջոցների ցանկը, ներառելով գնման ժամանակահատվածը, գինը և վիճակը: ը. Այլ փաստաթղթեր: **5. Աուդիտի գործունեության շրջանակները** **5.1**Աուդիտն իրականացվելու է Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան (ISA) և ներառելու է այն թեստերը և վերահսկման մեթոդները, որոնք անհրաժեշտ կհամարվեն աուդիտորի կողմից՝ ելնելով իրավիճակից: **5.2 Խախտումներ և կոռուպցիա**. Ըստ ISA 240, ISSAI (Աուդիտորի պատասխանատվությունը կապված ֆինանսական փաստաթղթերի աուդիտի խախտումների հետ) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների՝ աուդիտորը պետք է ներկայացնի և գնահատի խախտումների հետ կապված բոլոր ռիսկերը, ստանա կամ ներկայացնի այդ ռիսկերի վերլուծության պատշաճ ապացույցներ և պատշաճ կերպով գնահատի սահմանված կամ կասկածվող ռիսկերը: **5.3 Օրենքներ և կանոնակարգեր**. Աուդիտի մոտեցման մշակման և աուդիտի ընթացակարգերն իրականացնելու ընթացքում աուդիտորը պետք է գնահատի կազմակերպության համապատասխանությունը այն օրենքների և կանոնակարգերի դրույթներին, որոնք կարող են էապես ներազդել ՖՀ վրա՝ ISA 250, ISSAI 1250-ով (Ֆինանսական փաստաթղթերի աուդիտի ժամանակ օրենքների և կանոնակարգերի դիտարկում) կամ միջազգային աուդիտորական ստանդարտներով պահանջվող կարգով:				

5.4 Կառավարում. Հաղորդակցում կազմակերպության ղեկավարության հետ, որը պատասխանատու է ծրագրի կառավարման համար, կառավարման հետ կապված աուդիտի լուրջ խնդիրների վերաբերյալ՝ ISA 260, ISSAI 1260 (Կառավարման համար պատասխանատուների հետ հաղորդակցում) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

5.5 Ռիսկեր. Նպատակ հետապնդելով նվազեցնել աուդիտի ռիսկերը մինչ ընդունելի մակարդակները՝ աուդիտորը պետք է կիրառի աուդիտի ընթացակարգեր և հասցեագրի բոլոր շեղումները/ռիսկերը, որոնք հայտնաբերվում են գնահատման ընթացքում՝ ISA 330, ISSAI 1330 (Աուդիտորի արձագանքը գնահատված ռիսկերին) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն:

5.6Հարակից կողմ. ISA 550, ISSAI 1550 (Հարակից կողմեր) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն՝ աուդիտորը պետք է սահմանի և գնահատի հարակից կողմի ռիսկերը և դրանց վերահսկման պատշաճությունը:

5.7Փորձագետների ներգրավում. Որոշ գործողությունների բարդությունից ելնելով Աուդիտորը կարող է տեխնիկական փորձագետներ ներգրավել իր թիմի կազմում: Նման դեպքերում Աուդիտորը պետք է հետևի ISA 620: (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործում), INTOSAI's ISSAI 1620 (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործման վերաբերյալ) պահանջներին կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին: Փորձագետի ներգրավման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի պատվիրատուին՝ գործողությունների շրջանակների և ծախսերի վերաբերյալ համաձայնության գալու նպատակով:

5.8Աուդիտն իրականացնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

ա. **Համապատասխանությունը կիրառելի օրենսդրությանը և կնքված պայմանագրերին ու համաձայնագրերին** – Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը լիովին համապատասխանում են կիրառելի օրենսդրությանը և կնքված պայմանագրերի ու համաձայնագրերիպահանջներին:

բ. **Ներքին վերահսկման համակարգ** – Հաշվապահական հաշվառման և ընդհանուր ներքին վերահսկման համակարգի արդյունավետության բազմակողմանի գնահատում՝ վերահսկելու համար ծրագրի բոլոր մակարդակներում կատարված ծախսերը և այլ ֆինանսական գործարքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանխիկ գործարքների պատշաճության և արդյունավետության վրա:

գ. **Տվյալների պահպանում և հիմնավորող**

փաստաթղթեր – Բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, գրանցումները և հաշիվները պահպանվում են Դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին համաձայն: Առկա են էլեկտրոնային տվյալների (արխիվացման համակարգերի և ընթացակարգերի և այլն) պահպանման և կառավարման ընթացակարգերը:

դ. **Նախորդ աուդիտների հաշվետվությունների դիտարկումների հասցեագրում-** Աուդիտորը պետք է հասցեագրի նախորդ աուդիտների դիտարկումները, ներառյալ արտաքին աուդիտը և համապատասխան ներքին աուդիտները:

6 Աուդիտորի կարծիք

6.1Աուդիտիհաշվետվությունընախապատրաստելիսընտրվածաուդիտորականկազմակերպությունըպետքէներկայացնիաուդիտորի կարծիքը՝ ISA 700-ին և ISSAI1700-ի (Կարծիքիձևավորումևֆինանսականփաստաթղթերիվերաբերյալ հաշվետվության ներկայացում) համաձայն:

6.2 Աուդիտորի կարծիքի ակնկալվող բովանդակությունը պետք է ներառի առնվազն հետևյալ կետերը.

ա. Կարծիք այն մասին, թե արդյոք ՖՀ ճշգրիտ կերպով ներկայացնում են կազմակերպության բոլոր գործարքները դիտարկվող ժամանակահատվածի համար և ֆինանսական դրությունն այդ ժամանակահատվածի ավարտին:

բ. Ժամանակահատվածը, որի համար ներկայացված է կարծիքը:

գ. Հաշվապահական հաշվառման ստանդարտների և կիրառվող սկզբունքների համապատասխանության հաստատում կամ այդ ստանդարտներից և սկզբունքներից ունեցած շեղումների ազդեցությունների ներկայացում:

դ. Իրականացված աուդիտի ISA, ISSAI կամ համապատասխան ազգային աուդիտորական ստանդարտների պահանջներին համապատասխանության հաստատում:

ե. Հաստատում առ այն, որ ստացվել են բոլոր ապացույցները, որոնք անհրաժեշտ են ՖՀ հավաստիությունը երաշխավորելու համար:

7. Նամակղեկավարությանը

7.1Աուդիտիհաշվետվությունիցբացիաուդիտորներըպետքէներկայացնենննամակղեկավարությանը, որը ներառում է.

ա. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով համաձայնագրին և պայմանագրերին համապատասխանության աստիճանը:

բ. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված

«ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով կատարված ծախսերի համապատասխանությունը համաձայնագրի դրույթներին:

գ. Մեկնաբանություններ և դիտարկումներ կատարել հաշվապահական փաստաթղթերի, ընթացակարգերի, համակարգերի և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում:

դ. Սահմանել համակարգերի և վերահսկողության թերությունները և թույլ կողմերը և առաջարկություններ կատարել դրանց բարելավման ուղղությամբ:

ե. Ներկայացնել դրամաշնորհային համաձայնագրի ֆինանսական յուրաքանչյուր պարտավորության հետ համապատասխանության մակարդակը և անհրաժեշտության դեպքում մեկնաբանել այդ համապատասխանության վրա ազդեցություն ունեցող բոլոր ներքին և արտաքին գործոնները:

զ. Ներկայացնել այն խնդիրները, որոնք ուշադրության են արժանացել աուդիտի իրականացման ընթացքում և որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ կազմակերպության շարունակականության վրա:

է. Կազմակերպության ուշադրությունը հրավիրել աուդիտորի կողմից կարևոր համարվող ցանկացած այլ հարցին:

ը. Ղեկավարության նամակում պետք է ներառված լինեն նաև կազմակերպության կողմից տրված պատասխանները աուդիտի առաջարկություններին՝ համաձայնեցված առաջարկությունների իրականացման ժամկետների հետ համատեղ: Այն դեպքերում, երբ կազմակերպության համար ընդունելի չեն աուդիտի դիտարկումները, ղեկավարության հաշվետվության մեջ արտացոլված կլինի նշված անհամաձայնությունը:

8. Ընդհանուր տեղեկատվություն

8.1 Աուդիտի հաշվետվությունը և դրան ուղեկցող ղեկավարության նամակը, ներառյալ կազմակերպության պատասխանները պետք է մշակվեն աուդիտն սկսելուց հետո առավելագույնը 20 օրացուցային օրերի ընթացքում:

8.2Ընտրվածաուդիտորականկազմակերպությունը ժամանակավորապես կունենա ֆինանսական կառավարման համակարգի, հաշվապահական փաստաթղթերի, գույքի, սեփականության և անձնական զմիհետկապված բոլոր փաստաթղթերն ստանալու ամբողջական և չսահմանափակված իրավունք, որը կարող օգտակար լինել աուդիտի հետ կապված ցանկացած հարցերի պարզաբանման համար:

8.3Աուդիտորական կազմակերպությանն աուդիտի պլանավորման մեջ օժանդակելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի առնվազն ստորև ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության հասանելիությունը: կազմակերպության բնույթը հասկանալու

համար որպես աուդիտի պահանջների մի մաս առաջարկվում է, որ աուդիտորները ծանոթանան հետևյալ փաստաթղթերի հետ.

ա. ՀՀ ԱՆ և կազմակերպության միջև կնքված համաձայնագրերը և պայմանագրերը: ՀՀ ԱՆ-ի հետ ունեցած ցանկացած նամակագրություն, որով հաստատվում է դիտարկվող տարվա ընթացքում բյուջեում կատարված ցանկացած փոփոխություն:

բ. Ծրագրի հաշվետվություններ և կառավարչական նամակներ:

դ. Ընդլայնված ֆինանսական հաշվետվություններ:

9. Աուդիտորի որակավորումները և աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները

Աուդիտորը պետք է ունենա աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/ wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ):

Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա աուդիտի մասնակցության առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական):

Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում:

Աուդիտորը պետք է լինի լիովին անկախ՝ աուդիտ իրականացվող կազմակերպության, նրա իրականացման/վերահսկման գործակալության կամ ուղղակիորեն կապված հաստատությունների կառավարման և ֆինանսական շահերի առումներով: Աուդիտի ենթարկվող ժամանակահատվածի ընթացքում և աուդիտի իրականացման

ընթացքում աուդիտորը չպետք է հանդիսանա աշխատող, հանդես գա որպես տնօրեն, կամ ունենա ցանկացած ֆինանսական կամ մտերիմ աշխատանքային հարաբերություններ հաստատության ղեկավարության ցանկացած բարձրաստիճան ներկայացուցչի հետ: Աուդիտորը պետք է հայտնի իր անկախությունը սահմանափակող ցանկացած հարաբերության մասին:

10. Աուդիտի ժամանակացույցը և վերջնաժամկետները

Գործողություն	Ժամկետ
Պայմանագրի հանդիպումներ	Պայմանագրի կնքման պահից2օրերիընթացքում
Հաշվետվությունների աուդիտի իրականացում	Պայմանագրի կնքման պահից14օրերիընթացքում
Աուդիտի հաշվետվության և ղեկավարության նամակի նախագծերի ներկայացում	Պայմանագրի կնքման պահից16օրերիընթացքում
Վերջնական հաշվետվությունների ներկայացում	Պայմանագրի կնքման պահից18օրերիընթացքում
Ղեկավարության նամակի ներկայացում	Պայմանագրի կնքման պահից20օրերիընթացքում

Ծառայության մատուցման ժամկետ	
Սկիզբը	Ավարտը
Համաձայնագրային ֆինանսական միջոցների նախատեսվելուց հետո լիազորագիր համաձայնագրի կնքման պահից	20 օրացուցային օրվա ընթացքում

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
Հեռ.՝ 060-80-80-03
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝
Նելսոն Հարությունյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության փ. 22
Հեռ.՝ 010-54-43-01
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
1930014089990200
ՀՎՀՀ 02586575

Տնօրեն՝ Փարուսյան Գրիգորյան

(ստորագրություն)

02/05/18

«02» 05 2018թ. Հավելված N 2
կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211150	Աուդիտորական ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
Հեռ.՝ 060-80-80-03
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար՝
Նելսոն Զուլումյան

ԿԱՏԱՐՈՂ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության փ. 22
Հեռ.՝ 010-54-43-01
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
1930014089990200
ՀՎՀՀ 02586575

Տնօրեն՝ Փառանձեմ Գևորգյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՄԻՋԵՎ 02.05.2018թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ «ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «Մայիս» 2018թ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ն.Զուլոյանի մի կողմից, և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Փ.Գևորգյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 02.05.18թ. կնքված «Աուդիտորական ծառայությունների» ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/9» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված 2-ում «Վճարման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի.

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, կառավարության 3 շենք	ք. Երևան, Հանրապետության փ. 22
Հեռ.՝ 060-80-80-03	Հեռ.՝ 010-54-43-01
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
	1930014089990200
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02586575
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝	Տնօրեն՝ Փարամազդ Գևորգյան
Նելսոն Զուլոյան	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
	04/05/18

Հավելված N 2
«02» Մայիսի 2018 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/9» ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1
« » 2018 թ. կնքված Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211150	Աուդիտորական ծառայություններ	1 090 000			1 090 000			1 090 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
Հեռ.՝ 060-80-80-03
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02507171
Հ/Հ 900011018885

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝
Նելլի ՄԵԼՔՈՆՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության փ. 22
Հեռ.՝ 010-54-43-01
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
1930014089990200
ՀՎՀՀ 02586575

Տնօրեն՝ Փառանձեմ Գևորգյան
(ստորագրություն)
29/05/18